**Համաձայնագիր**

**Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» կիրարկմանն օժանդակելու համագործակցության մասին**

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները (որոնցից յուրաքանչյուրը՝ «Կողմ», իսկ միասին՝ «Կողմեր») ցանկանում են կնքել համաձայնագիր միջազգային տնտեսական գործունեություն իրականացնելիս հարկերից խուսափման դեմ պայքարում իրենց համագործակցությունը բարելավելու նպատակով,

Նկատի ունենալով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները ընդունել է իրավական ակտ, որը հայտնի է որպես «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտ» (ՕՀՀՀԱ), որը ֆինանսական հաստատությունների համար հաշվետվության ռեժիմ է սահմանում որոշակի հաշիվների նկատմամբ,

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը սատարում է հարկային պարտավորությունների կատարման բարելավմանն ուղղված՝ ՕՀՀՀԱ-ի նպատակները,

Նկատի ունենալով, որ ՕՀՀՀԱ-ն բարձրացրել է մի շարք հարցեր, ներառյալ, որ հնարավոր է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունները չկարողանան բավարարել ՕՀՀՀԱ-ի մի շարք պահանջներ՝ ներքին իրավական խոչընդոտների պատճառով,

Նկատի ունենալով, որ ՕՀՀՀԱ-ի կիրարկման օժանդակությանն ուղղված միջպետական համագործակցությունը կանդրադառնա այս խնդիրներին և կթեթևացնի Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունների բեռը,

Նկատի ունենալով, որ Կողմերը ցանկանում են կնքել համաձայնագիր, որը կնպաստի ՕՀՀՀԱ-ի կիրարկմանն օժանդակելուն ուղղված համագործակցությանը՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունների կողմից ԱՄՆ Ներքին եկամուտների ծառայությանը հաշվետվության ուղղակի տրամադրման վրա, պահանջի դեպքում՝ տեղեկությունների փոխանակման ապահովմամբ՝ պահպանելով գաղտնիությունը

և ստորև նախատեսված ապահովության այլ միջոցներ, ներառյալ՝ փոխանակված տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթները,

Հետևաբար, Կողմերը համաձայնել են հետևյալի մասին.

**Հոդված 1**
**Սահմանումներ**

1. Սույն համաձայնագրի և նրա բոլոր հավելվածների համար («Համաձայնագիր») հետևյալ եզրույթներն ունեն ստորև ներկայացված իմաստները.

(ա) **«Միացյալ Նահանգներ»** եզրույթը նշանակում է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ներառյալ նրա նահանգները, սակայն չի ներառում ԱՄՆ տարածքները: Ցանկացած հղում Միացյալ Նահանգների որևէ **«Նահանգի»** ընդգրկում է Կոլումբիայի շրջանը:

(բ) **«ԱՄՆ տարածք»** եզրույթը նշանակում է Ամերիկյան Սամոա, Հյուսիսային Մարիանյան Կղզիների Համագործակցություն, Գուամ, Պուերտո Ռիկոյի Համագործակցություն կամ ԱՄՆ Վիրջինյան կղզիներ:

(գ) **«ՆԵԾ»** եզրույթը նշանակում է Միացյալ Նահանգների Ներքին եկամուտների ծառայություն:

(դ) **«Հայաստանի Հանրապետություն»** եզրույթը նշանակում է Հայաստանի Հանրապետություն:

(ե) **«Գործընկեր երկիր»** եզրույթը նշանակում է այնպիսի երկիր, որը փաստացի համաձայնագիր ունի Միացյալ Նահանգների հետ ՕՀՀՀԱ-ի կիրարկմանն օժանդակելու մասին: ՆԵԾ-ը հրապարակում է Գործընկեր երկրների ցանկը:

(զ) **«Իրավասու մարմին»** եզրույթը նշանակում է.

1) Միացյալ Նահանգների պարագայում՝ **Գանձապետարանի Քարտուղարը կամ նրա ներկայացուցիչը,** իսկ

2) Հայաստանի Հանրապետության պարագայում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

(է) **«Ֆինանսական հաստատություն»** եզրույթը նշանակում է Պահառու հաստատություն, Ավանդ (Դեպոզիտ) ընդունող հաստատություն,

Ներդրումային կազմակերպություն կամ Սահմանված հատուկ ապահովագրական ընկերություն:

(ը) **«Օտարերկրյա հաշվետվության ենթակա գումար»** եզրույթը նշանակում է, համաձայն Միացյալ Նահանգների Գանձապետարանի համապատասխան ընթացակարգի՝ ֆիքսված կամ հաշվարկվող տարեկան կամ պարբերական եկամտի վճար, որը կլիներ պահման ենթակա վճար, եթե կատարվեր Միացյալ Նահանգներում գտնվող աղբյուրներից:

(թ) **«Պահառու հաստատություն»** եզրույթը նշանակում է որևէ կազմակերպություն, որի բիզնեսի գերակշիռ մասը կազմում է այլ անձանց համար ֆինանսական միջոցների պահումը: Կազմակերպության բիզնեսի գերակշիռ մասը կազմում է այլ անձանց համար ֆինանսական միջոցների պահումը, եթե կազմակերպության համախառն եկամուտը, որն առնչվում է ֆինանսական միջոցները պահելու կամ հարակից ֆինանսական ծառայությունների հետ, հավասար է կամ գերազանցում է կազմակերպության համախառն եկամտի 20 տոկոսը՝ հաշվարկված հետևյալներից ամենակարճի հիման վրա՝ (i) եռամյա ժամանակահատվածում, որն ավարտվում է դեկտեմբերի 31-ին (կամ ոչ-օրացուցային տարվա հաշվետու ժամանակահատվածի վերջին օրը) այն տարվանից առաջ, երբ կատարվում է հաշվարկը կամ (ii) այն ժամանակահատվածում, որի ընթացքում կազմակերպությունը գոյություն է ունեցել:

(ժ) **«Ավանդ (Դեպոզիտ) ընդունող հաստատություն»** եզրույթը նշանակում է կազմակերպություն, որն ընդունում է ավանդներ (դեպոզիտներ) սովորական բանկային կամ նմանատիպ գործունեության շրջանակներում:

(ի) **«Ներդրումային կազմակերպություն»** եզրույթը նշանակում է որևէ կազմակերպություն, որը որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է (կամ կառավարվում է մի կազմակերպության կողմից, որն իրականացնում է որպես ձեռնարկատիրական գործունեություն) հետևյալ գործունեություններից կամ գործառնություններից մեկը կամ ավելին հաճախորդի համար կամ նրա անունից.

1) դրամային շուկայի գործիքների (չեկեր, մուրհակներ, դեպոզիտար ստացականներ, ածանցյալներ և այլն); արտարժույթի, բորսայի, տոկոսադրույքի և ինդեքսային գործիքների, փոխանցելի արժեթղթերի կամ ապրանքային ֆյուչերսների առք և վաճառք,

2) անհատական և կոլեկտիվ պորտֆելային ներդրումների (արժեթղթերի) կառավարում, կամ

3) այլ անձանց անունից ֆինանսական միջոցների կամ փողի այլ տեսակի ներդրում, ղեկավարում կամ կառավարում:

Սույն ենթապարբերություն 1(ի) մեկնաբանվում է Ֆինանսական գործողությունների հատուկ հանձնաժողովի առաջարկություններում կայացված «ֆինանսական հաստատություն» եզրույթի սահմանմանը համահունչ լեզվով:

(լ) **«Սահմանված հատուկ ապահովագրական ընկերություն»** եզրույթը նշանակում է որևէ կազմակերպություն, որն ապահովագրական ընկերություն է (կամ էլ ապահովագրական ընկերության հոլդինգային ընկերություն է), որը կնքում է կամ պարտավոր է կատարել Կանխիկ արժեքի ապահովագրական պայմանագրից կամ Անուիտետային պայմանագրից բխող վճարումներ:

(խ) **«Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատություն»** եզրույթը նշանակում է (i) որևէ ֆինանսական հաստատություն՝ հիմնադրված Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն, սակայն բացառությամբ այդպիսի ֆինանսական հաստատության որևէ մասնաճյուղի, որը գտնվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, և (ii) ֆինանսական կազմակերպության որևէ մասնաճյուղ, որը չի հիմնադրվել Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն, եթե այդպիսի մասնաճյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

(ծ) **«Գործընկեր երկրի ֆինանսական հաստատություն»** եզրույթը նշանակում է (i) որևէ ֆինանսական հաստատություն, որը հիմնադրվել է Գործընկեր երկրում, սակայն բացառությամբ այդպիսի ֆինանսական հաստատության որևէ մասնաճյուղի, որը գտնվում է Գործընկեր երկրից դուրս, և (ii) Գործընկեր երկրում չհիմնադրված ֆինանսական կազմակերպության որևէ մասնաճյուղ, որը գտնվում է Գործընկեր երկրում:

(կ) **«Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատություն»** եզրույթը նշանակում է Հայաստանի Հանրապետության որևէ ֆինանսական հաստատություն, որը Հայաստանի Հանրապետության ոչ հաշվետու ֆինանսական հաստատություն չէ:

(հ) **«Հայաստանի Հանրապետության ոչ հաշվետու ֆինանսական հաստատություն»** եզրույթը նշանակում է Հայաստանի Հանրապետության ցանկացած ֆինանսական հաստատություն կամ Հայաստանի Հանրապետությունում գտնվող որևէ այլ կազմակերպություն, որը նկարագրված է Հավելված II-ում որպես Հայաստանի Հանրապետության ոչ հաշվետու ֆինանսական հաստատություն կամ այլ կերպ որակվում է որպես

համապատասխանող ՕՖՀ կամ որպես ազատված շահառու սեփականատեր՝ համաձայն ԱՄՆ Գանձապետարանի համապատասխան կանոնակարգի:

(ձ) **«Ոչ-մասնակից ֆինանսական հաստատություն»** եզրույթը նշանակում է Ոչ-մասնակից ՕՖՀ, ինչպես այդ եզրույթը սահմանված է ԱՄՆ Գանձապետարանի համապատասխան կանոնակարգում, սակայն չի ներառում Հայաստանի Հանրապետության որևէ ֆինանսական հաստատություն կամ այլ Գործընկեր երկրի ֆինանսական հաստատություն, բացի որևէ ֆինանսական հաստատությունից, որը դիտարկվում է որպես Ոչ-մասնակից ֆինանսական հաստատություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հոդված 4-ի պարբերություն 2-ի կամ Միացյալ Նահանգների և Գործընկեր երկրի միջև կնքված համաձայնագրի համապատասխան դրույթի:

(ղ) **«Նոր հաշիվ»** եզրույթը նշանակում է Ֆինանսական Հաշիվ, որը բացվել է Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատության կողմից 2014 թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո:

(ճ) **«ԱՄՆ հաշիվ»** եզրույթը նշանակում է Ֆինանսական Հաշիվ, որը սպասարկվում է Հայաստանի Հանրապետության որևէ Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից և պատկանում է մեկ կամ ավելի Նախատեսված ԱՄՆ անձանց կամ ոչ-ԱՄՆ կազմակերպությանը, որը Վերահսկող անձը կամ անձինք հանդիսանում են Նախատեսված ԱՄՆ անձ: Չնայած վերոհիշյալին՝ հաշիվը չպետք է դիտարկվի որպես ԱՄՆ հաշիվ, եթե այդպիսի հաշիվը չի բացահայտվում ԱՄՆ հաշիվ Հավելված I-ում ներկայացված վիճակի գնահատման ընթացակարգերն իրականացնելուց հետո:

(մ) **«Համաձայնություն չտրամադրած ԱՄՆ հաշիվ»** եզրույթը նշանակում է Ֆինանսական հաշիվ, որը սպասարկվում է Հայաստանի Հանրապետության Հաշվետու Ֆինանսական հաստատության կողմից 2014 թ. հունիսի 30-ի դրությամբ, որի նկատմամբ (i) Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատությունը որոշել է, որ այն ԱՄՆ Հաշիվ է համաձայն Հավելված I-ում ներկայացված վիճակի գնահատման ընթացակարգի, (ii) Հայաստանի Հանրապետության օրենքներն արգելում են ներկայացնել ՕՖՀ համաձայնագրով պահանջվող հաշվետվությունը Հաշվետիրոջ համաձայնության բացակայության պայմաններում, (iii) Հայաստանի Հանրապետության Հաշվետու ֆինանսական հաստատությունը փորձել է, սակայն չի կարողացել ստանալ հաշվետվություն տալու համաձայնությունը կամ էլ հաշվետիրոջ ԱՄՆ ՀՀՀ-ն (Հարկատուի հաշվառման համար) և (iv) Հայաստանի Հանրապետության Հաշվետու ֆինանսական հաստատությունը ՆԵԾ-ին է ներկայացրել կամ պարտավոր էր ներկայացնել ամփոփ տեղեկություններ հաշվի մասին՝ ինչպես նախատեսված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471-1474 բաժիններով և ԱՄՆ Գանձապետարանի համապատասխան կանոնակարգով:

(յ) **«Ֆինանսական հաշիվ»** եզրույթն ունի ԱՄՆ Գանձապետարանի համապատասխան կանոնակարգով սահմանված իմաստը, սակայն չի ներառում որևէ հաշիվ, որը բացառված է Հավելված II-ում ներկայացված ֆինանսական հաշվի սահմանումից:

(ն) **«ՕՖՀ համաձայնագիր»** եզրույթը նշանակում է այնպիսի համաձայնագիր, որում շարադրված են սույն Համաձայնագրին համահունչ պահանջներ, որ Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատությունը դիտարկվի որպես ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471(բ) պարբերության պահանջները բավարարող հաստատություն:

(շ) **«Հաշվետեր»** եզրույթը նշանակում է այն անձը, որին հաշիվը սպասարկող Ֆինանսական հաստատությունը գրանցել կամ բացահայտում է որպես Ֆինանսական հաշվի տեր: Ֆինանսական հաստատությունից բացի որևէ անձ, որը Ֆինանսական հաշիվ է վարում որևէ այլ անձի համար կամ նրա անունից՝ լինի դա գործակալ, պահառու, անվանատեր, ստորագրող անձ, ներդրումային խորհրդատու կամ միջնորդ, սույն Համաձայնագրի պարագայում չի դիտարկվում որպես հաշվետեր, և նման այլ անձը դիտարկվում է որպես այդպիսի հաշվի հաշվետեր: Անմիջականորեն նախորդող նախադասության նպատակների համար «Ֆինանսական հաստատություն» եզրույթը չի ներառում ԱՄՆ որևէ տարածքում ստեղծված կամ հիմնադրված Ֆինանսական հաստատություն: Կանխիկ արժեքի ապահովագրական պայմանագրի կամ Անուիտետի պայմանագրի դեպքում հաշվետեր է ցանկացած անձ, որին մատչելի է Կանխիկ արժեքը կամ որն իրավասու է փոխելու պայմանագրի շահառուին: Եթե որևէ անձի մատչելի չէ Կանխիկ արժեքը կամ որևէ անձ իրավասու չէ փոխել շահառուին, ապա Հաշվետեր է այն անձը, որը պայմանագրում նշված է որպես սեփականատեր և այն անձը, որը պաշտոնապես օժտված է վճարում ստանալու իրավունքով՝ համաձայն պայմանագրի պայմանների: Կանխիկ արժեքի ապահովագրության պայմանագրի կամ Անուիտետի պայմանագրի վճարման ժամկետը հասնելուն պես յուրաքանչյուր անձ, ով համաձայն պայմանագրի օժտված է վճարում ստանալու իրավունքով, դիտվում է որպես Հաշվետեր:

(ո) **«Կանխիկ արժեքի ապահովագրության պայմանագիր»** և **«Անուիտետի պայմանագիր»** եզրույթներն ունեն ԱՄՆ Գանձապետարանի համապատասխան կանոնակարգերում սահմանված իմաստները:

(չ) **«ԱՄՆ անձ»** եզրույթը նշանակում է որևէ ԱՄՆ քաղաքացի կամ ռեզիդենտ անհատ, ընկերակցություն կամ ընկերություն՝ հիմնված Միացյալ Նահանգներում կամ համաձայն Միացյալ Նահանգների կամ նրա որևէ Նահանգի օրենքների, հավատարմագրային ընկերություն, եթե (i) Միացյալ Նահանգների որևէ դատարան իրավունք կունենա գործող օրենսդրությամբ կայացնելու որոշումներ կամ վճիռներ հավատարմագրային ընկերության կառավարմանը

վերաբերող, ըստ էության, բոլոր հարցերի առնչությամբ, և (ii) մեկ կամ ավելի ԱՄՆ անձինք լիազորություն ունեն վերահսկելու հավատարմագրային ընկերության բոլոր հիմնական որոշումները կամ որևէ ունեցվածք, որը պատկանում է Միացյալ Նահանգների քաղաքացու կամ ռեզիդենտ հանգուցյալի: Սույն՝ 1(չ) ենթապարբերությունը պետք է մեկնաբանվի համաձայն ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի:

(պ) **«Նախատեսված ԱՄՆ անձ»** եզրույթը նշանակում է որևէ ԱՄՆ անձ, բացառությամբ. (i) որևէ ընկերության, որի արժեթղթերը կանոնավոր կերպով առևտրի են ներկայացվում արժեթղթերի ճանաչված մեկ կամ ավելի շուկաներում, (ii) որևէ ընկերություն, որն անդամակցում է նույն ընդլայնված փոխկապակցված խմբին, ինչպես դա սահմանված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 (ե)(2) բաժնում որպես (i) պարբերությունում նկարագրված ընկերություն, (iii) Միացյալ Նահանգները կամ ամբողջությամբ դրա սեփականությունը հանդիսացող որևէ գործակալություն կամ կառուցվածքային միավոր; (iv) Միացյալ Նահանգների որևէ նահանգ կամ որևէ ԱՄՆ տարածք, վերոհիշյալներին պատկանող որևէ քաղաքական ստորաբաժանում կամ վերոհիշյալ միավորների որևէ մեկին կամ ավելիին ամբողջությամբ պատկանող գործակալություն կամ կառուցվածքային միավոր, (v) որևէ կազմակերպություն, որն ազատված է հարկերից համաձայն ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 501(ա) բաժնի կամ անհատական կենսաթոշակային պլանի, ինչպես դա սահմանված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 7701(ա)(37) բաժնում, (vi) որևէ բանկ, ինչպես դա սահմանված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 581 բաժնում, (vii) որևէ անշարժ գույքի ներդրումային հավատարմագրային ընկերությունում, ինչպես դա սահմանված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 856 բաժնում, (viii) որևէ կարգավորվող ներդրումային ֆոնդ, ինչպես դա սահմանված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 851 բաժնում կամ որևէ կազմակերպություն, որը գրանցված է ԱՄՆ արժեթղթերի և բորսաների հանձնաժողովի կողմից համաձայն 1940 թ. Ներդրումային ֆոնդերի ակտի (15 ԱՄՆ Օրենսգիրք 80ա-64), (ix) որևէ ընդհանուր հավատարմագրային հիմնադրամ, ինչպես դա սահմանված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 584(ա) բաժնում, (x) որևէ հավատարմագրային ընկերություն, որն ազատված է հարկերից համաձայն ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 664(գ) բաժնի կամ նկարագրված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 4947(ա)(1) բաժնում, (xi) արժեթղթերի, ապրանքային կամ ածանցյալ ֆինանսական գործիքների (ներառյալ՝ հայեցողական հիմնական պայմանագրերը, ֆյուչերսները, ֆորվարդները և օպցիոնները) որևէ դիլեր, որը գրանցված է որպես այդպիսին համաձայն Միացյալ Նահանգների կամ նրա որևէ նահանգի օրենքների, կամ (xii) որևէ բրոքեր, ինչպես դա սահմանված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 6045(գ) բաժնում, կամ (xiii) հարկերից ազատված ցանկացած հավատարմագրային ծրագիր, որը նկարագրված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 403 (բ) կամ 457 (գ) բաժիններում:

(ջ) **«Կազմակերպություն»** եզրույթը նշանակում է իրավաբանական անձ կամ իրավաբանական միավոր, ինչպիսին է հավատարմագրային ընկերությունը:

(ռ) **«Ոչ ԱՄՆ կազմակերպություն»** եզրույթը նշանակում է կազմակերպություն, որն ԱՄՆ անձ չէ:

(ս) Կազմակերպությունը հանդիսանում է մեկ այլ կազմակերպության **«Փոխկապակցված կազմակերպություն»,** եթե այդ կազմակերպություններից որևէ մեկը վերահսկում է մյուս կազմակերպությունը կամ երկու կազմակերպություններն էլ ընդհանուր վերահսկողության տակ են: Այս պարագայում վերահսկողությունը ներառում է որևէ կազմակերպության քվեների կամ արժեքի 50 տոկոսից ավելի մասի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը: Չնայած վերոհիշյալին՝ Հայաստանի Հանրապետությունը կարող է դիտարկել կազմակերպությունը որպես մեկ այլ կազմակերպության հետ չփոխկապակցված Փոխկապակցված կազմակերպություն, եթե այդ երկու կազմակերպությունները չեն անդամակցում նույն ընդլայնված փոխկապակցված խմբին, ինչպես դա սահմանված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 (ե)(2) բաժնում:

(վ) **«ԱՄՆ ՀՀՀ»** եզրույթը նշանակում է Միացյալ Նահանգների դաշնային հարկատուի հաշվառման համար:

(տ) **«Հսկող անձինք»** եզրույթը նշանակում է ֆիզիկական անձինք, ովքեր հսկողություն ունեն կազմակերպության նկատմամբ: Հավատարմագրային ընկերության պարագայում այդպիսի եզրույթը նշանակում է հավատարմագրային ընկերության հիմնադիրը, հոգաբարձուները, հովանավորը (եթե այդպիսին կա), շահառուները կամ շահառուների դասը, և որևէ այլ ֆիզիկական անձ, ով իրականացնում է առավելագույն փաստացի հսկողություն հավատարմագրային ընկերության նկատմամբ, իսկ հավատարմագրային ընկերությունից այլ իրավաբանական կարգավիճակ ունեցող միավորման դեպքում սույն եզրույթը նշանակում է անձինք համարժեք կամ նմանատիպ պաշտոններում: «Հսկող անձինք» եզրույթը մեկնաբանվում է Ֆինանսական միջոցառումների խմբի առաջարկություններին համահունչ կերպով:

2. Սույն Համաձայնագրում այլ կերպ չսահմանված որևէ եզրույթ, եթե համատեքստն այլ բան չի պահանջում կամ Իրավասու մարմինները համաձայնության են գալիս ընդհանուր իմաստի շուրջ (ինչը թույլատրվում է երկրում գործող ներքին օրենսդրությամբ), պետք է ունենա այն իմաստը, որ այդ պահին այն ունի համաձայն այն Կողմի օրենքների, որը կիրարկել է սույն Համաձայնագիրը, ընդ որում, այդ Կողմի համապատասխան հարկային օրենքներով սահմանված իմաստը գերակայում է այդ Կողմի այլ օրենքներով տվյալ եզրույթին տրված այլ իմաստների նկատմամբ:

## Հոդված 2
## Հաշվետվություն և տեղեկությունների փոխանակում

1. **<u>Հրահանգ Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատություններին:</u>** Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է հրահանգել և հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության Ֆինանսական հաստատություններին.

ա) գրանցվելու ՆԵԾ-ում, ՆԵԾ ՕՀՀՀԱ գրանցման կայքում և բավարարելու ՕՖՀ համաձայնագրի պահանջները, ներառյալ՝ վիճակի գնահատման, հաշվետվության և պահումներ կատարելու պահանջները,

բ) 2014թ.հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատությունների կողմից սպասարկվող հաշիվների առնչությամբ, որոնք ճանաչվում են ԱՄՆ հաշիվներ,

(i) պահանջել յուրաքանչյուր Հաշվետիրոջից Հաշվետիրոջ ԱՄՆ ՀՀՀ-ն և հաշվետվություն ներկայացնելու համաձայնություն [և միաժամանակ գրավոր տեղեկացնել հաշվետիրոջը, որ եթե ԱՄՆ ՀՀՀ-ն և համաձայնությունը չտրվեն, ապա (1) ամփոփ տեղեկությունները հաշվի մասին կհայտնվեն ՆԵԾ-ին, (2) հաշվի մասին տեղեկությունները կարող են հանգեցնել հաշվի մասին կոնկրետ տեղեկություններ ստանալու՝ ՆԵԾ-ի խմբային պահանջին, (3) այդ դեպքում հաշվի մասին տեղեկությունները կփոխանցվեն Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմնին, և (4) Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը կարող է փոխանակել այս տեղեկությունները ՆԵԾ-ի հետ՝ համաձայն սույն Հոդվածի պարբերություն 2-ի,

(ii) տարեկան հաշվետվություն ներկայացնել ՆԵԾ-ին՝ ՕՖՀ Համաձայնագրով և ԱՄՆ Գանձապետարանի համապատասխան կանոնակարգով նախատեսված ժամկետներում և ձևով, և պահանջվող ամփոփ տեղեկությունները Համաձայնություն չտրամադրած հաշվետերերի ԱՄՆ Հաշիվների համար,

գ) Ոչ-մասնակից ֆինանսական հաստատությունների հաշիվների և պարտավորությունների առումով, որոնք գոյություն ունեն 2014 թ. հունիս 30-ի դրությամբ, և որոնց առնչությամբ Հաշվետու Ֆինանսական հաստատությունն ակնկալում է վճարել Օտարերկրյա հաշվետվության ենթակա գումար,

(i) 2015 և 2016 օրացուցային տարիների համար, պահանջել յուրաքանչյուր այդպիսի Ոչ-մասնակից ֆինանսական

հաստատությունից Ոչ-մասնակից ֆինանսական հաստատության համաձայնությունը հաշվետվություն ներկայացնելու համար և միաժամանակ գրավոր տեղեկացնել Ոչ-մասնակից ֆինանսական հաստատությանը, որ եթե այդ համաձայնությունը չտրվի, ապա (1) հաշվի մասին տեղեկությունները Ոչ-մասնակից ֆինանսական հաստատություններին վճարված Օտարերկրյա հաշվետվության ենթակա գումարների մասին կհայտնվեն ՆԵԾ-ին, (2) այդպիսի տեղեկությունները կարող են հանգեցնել հաշվի կամ պարտավորությունների մասին կոնկրետ տեղեկություններ ստանալու՝ ՆԵԾ-ի խմբակային պահանջին, (3) և այդ դեպքում հաշվի մասին տեղեկությունները կփոխանցվեն Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմնին, և (4) Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը կարող է փոխանակել այս տեղեկությունները ՆԵԾ-ի հետ՝ համաձայն սույն Հոդվածի պարբերություն 2-ի,

(ii) 2015 և 2016 օրացուցային տարիների համար հայտնել ՆԵԾ-ին համաձայնություն չտրամադրած Ոչ-մասնակից ֆինանսական հաստատությունների քանակը, որոնց տարվա ընթացքում վճարվել են Օտարերկրյա հաշվետվության ենթակա գումարները և այդ բոլոր վճարումների համընդհանուր արժեքը՝ ոչ ուշ, քան տրամադրված տեղեկությունների տարվան հաջորդող տարվա մարտի 15-ը,

դ) Նոր հաշիվների համար, որոնք ճանաչվել են ԱՄՆ Հաշիվներ, ստանալ յուրաքանչյուր Հաշվետիրոջ համաձայնությունը՝ հաշվետվության համար՝ համաձայն ՕՖՀ համաձայնգրի պահանջների՝ որպես հաշիվը բացելու պայման, և

ե) 2014 թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո Ոչ-մասնակից ֆինանսական հաստատության կողմից բացված նոր հաշիվների կամ ստանձնած պարտավորությունների առնչությամբ, որոնց համար Հայաստանի Հանրապետության Հաշվետու ֆինանսական հաստատությունն ակնկալում է վճարելու Օտարերկրյա հաշվետվության ենթակա գումար, յուրաքանչյուր այդպիսի Ոչ-մասնակից ֆինանսական հաստատությունից ստանալու հաշվետվություն տալու համաձայնություն՝ համաձայն ՕՖՀ համաձայնագրի պահանջների՝ որպես հաշիվը բացելու կամ պարտավորությունը ստանձնելու պայման:

## 2. <u>Տեղեկությունների փոխանակում</u>

ա) ՕՀՀՀԱ-ի կիրարկման համատեքստում, ԱՄՆ Իրավասու մարմինը կարող է խմբակային պահանջ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմնին, ՆԵԾ-ին ներկայացված ամփոփ

տեղեկությունների հիման վրա, սույն Հոդվածի 1(բ)(ii) և 1(գ)(ii) ենթապարբերություններում նկարագրված հրահանգի համաձայն՝ ԱՄՆ հաշիվների և Ոչ-մասնակից ֆինանսական հաստատություններին վճարված Օտարերկրյա հաշվետվության ենթակա գումարների մասին, որոնց մասին Հայաստանի Հանրապետության Հաշվետու ֆինանսական հաստատությունը պետք է հաշվետվություն ներկայացներ ըստ ՕՖՀ-ի Համաձայնագրի՝ համաձայնությունը ստանալու պարագայում:

բ) ԱՄՆ Իրավասու մարմինը կարող է նաև «հետագա» պահանջ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմնին Համաձայնություն չտրամադրած ԱՄՆ հաշվի մասին լրացուցիչ տեղեկությունների ստանալու համար, ներառյալ՝ հաշվի քաղվածքները, որ Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատությունը սովորաբար պատրաստում է և որոնք ամփոփում են հաշվի գործունեությունը (ներառյալ՝ հաշվից հանված գումարները, փոխանցումները և հաշվի փակումները):

գ) Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը պարտավոր է ներկայացնել ԱՄՆ Իրավասու մարմնին ԱՄՆ Իրավասու մարմնի պահանջած տեղեկությունները՝ համաձայն սույն Հոդվածի 2(ա) և 2(բ) ենթապարբերությունների՝ անկախ այն բանից, արդյոք Հայաստանի Հանրապետությանը պետք են այդ տեղեկությունները սեփական հարկային նպատակներով կամ արդյոք այդ տեղեկություններն առնչվում են որոշակի վարքի հետաքննության հետ, ինչը կարող է հանցագործություն համարվել Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այդպիսի վարքը դրսևորվեր Հայաստանի Հանրապետությունում: Եթե Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմնի ունեցած տեղեկությունները բավական չեն տեղեկության պահանջը բավարարելու համար, Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը պետք է օգտագործի տեղեկությունները հավաքելու բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ԱՄՆ Իրավասու մարմնին տրամադրի պահանջված տեղեկությունները: Միացյալ Նահանգների օրենքներով և իրավական պրակտիկայով նախատեսված արտոնությունները չեն կիրառվում Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմնի միջնորդությամբ, և այդպիսի արտոնությունների կիրառումը բացառապես Միացյալ Նահանգների պատասխանատվության շրջանակներում է:

դ) Սույն Հոդվածի 2(ա) ենթապարբերությունում նկարագրված՝ ԱՄՆ Իրավասու մարմնի խմբակային պահանջի առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը խմբակային պահանջը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում ներկայացնում է ԱՄՆ Իրավասու մարմնին

բոլոր պահանջված տեղեկություններն այն ձևաչափով, որով դրանք ներկայացված կլինեին, եթե Հայաստանի Հանրապետության Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից ներկայացված լինեին ուղղակիորեն ՆԵԾ-ին: Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը տեղեկացնում է ԱՄՆ Իրավասու մարմնին և Հայաստանի Հանրապետության համապատասխան հաշվետու ֆինանսական հաստատությանը, եթե պահանջված տեղեկությունները փոխանակելու գործում կարող է լինել ուշացում: Այդպիսի դեպքում Հայաստանի Հանրապետության Հաշվետու ֆինանսական հաստատության նկատմամբ կիրառվում են սույն Համաձայնագրի Հոդված 3-ի 2(բ) ենթապարբերության դրույթները, իսկ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը հնարավորինս արագ ԱՄՆ Իրավասու մարմնին է տրամադրում պահանջված տեղեկությունները:

ե) Չնայած սույն Հոդվածի 2(ա) ենթապարբերությանը՝ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմնից չի պահանջվում գտնել և հայտնել Համաձայնություն չտրամադրած ԱՄՆ Հաշվետիրոջ ԱՄՆ ՀՀՀ-ն, եթե այդպիսի ԱՄՆ ՀՀՀ-ն բացակայում է Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատության փաստաթղթերում: Այդ դեպքում Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը պետք է գտնի և ներառի փոխանակվող տեղեկություններում համապատասխան անձի ծննդյան ամսաթիվը, եթե այդ ծննդյան ամսաթիվն առկա է Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատության փաստաթղթերում:

զ) Սույն Հոդվածի 2(ա) և 2(բ) ենթապարբերություններով նախատեսված պահանջները պետք է կիրառվեն սույն Համաձայնագրի ստորագրման օրվա կամ դրանից հետո ընկած ժամանակահատվածին վերաբերող տեղեկությունների նկատմամբ:

**Հոդված 3**
**ՕՀՀՀԱ-ի կիրարկումը Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունների նկատմամբ**

1. <u>**Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատությունների կարգավիճակը:**</u> Հաշվի առնելով սույն Համաձայնագրի Հոդված 4-ի պարբերություն 2-ի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր հաշվետու ֆինանսական հաստատություն, որը գրանցվում է ՆԵԾ-ում ՆԵԾ-ի ՕՀՀՀԱ գրանցման կայքում և բավարարում է ՕՖՀ համաձայնագրի

պայմանները, դիտվում է որպես պայմանները բավարարող հաստատություն և ենթակա չէ ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 բաժնով նախատեսված պահումներին:

2. **Հատուկ կանոններ Համաձայնություն չտրամադրած ԱՄՆ հաշիվների համար**

ա) Հաշվի առնելով սույն Հոդվածի 2(բ) ենթապարբերությունը՝ Միացյալ Նահանգները չեն պահանջում Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատությունից հարկեր պահել՝ համաձայն ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 կամ 1472 բաժինների, չենթարկվող հաշվետիրոջ հաշվից (ինչպես սահմանված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 (դ)(6) բաժնում) կամ փակել այդպիսի հաշիվը, եթե.

(i) Հայաստանի Հանրապետության Հաշվետու ֆինանսական հաստատությունը համապատասխանում է հաշվի նկատմամբ սույն Համաձայնագրի Հոդված 2-ի պարբերություն 1-ի հրահանգներին, և

(ii) Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը փոխանցում է ԱՄՆ Իրավասու մարմնին սույն Համաձայնագրի Հոդված 2-ի 2(ա) ենթապարբերությունում նկարագրված պահանջված տեղեկություններն այդպիսի պահանջ ստանալու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում:

բ) Եթե սույն Հոդվածի 2(ա)(ii) ենթապարբերությունը չի կատարվում, Հայաստանի Հանրապետության Հաշվետու Ֆինանսական հաստատությունից պահանջվում է դիտարկել այդ հաշիվը որպես չենթարկվող հաշվետիրոջ հաշիվ, ինչպես սահմանված է ԱՄՆ Գանձապետարանի կանոնակարգով, ներառյալ՝ հարկեր պահելով, որտեղ դա պահանջվում է ԱՄՆ Գանձապետարանի նշված կանոնակարգով՝ սկսած սույն Համաձայնագրի Հոդված 2-ի 2(ա) ենթապարբերությունում նկարագրված պահանջը ստանալու ամսաթվից վեց ամիս հետո և ավարտելով այն ամսաթվին, երբ Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինը ԱՄՆ Իրավասու մարմնին է փոխանցում պահանջված տեղեկությունները:

3. **Առանձնահատուկ վերաբերմունք Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային պլանների նկատմամբ:** Միացյալ Նահանգները պետք է դիտարկեն Հավելված II-ում ներկայացված Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային պլանները որպես ներկայացված պահանջներին համապատասխանող ՕՖՀ-ներ կամ ազատված շահառու սեփականատերեր՝ ելնելով ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 և 1472 բաժինների նպատակներից: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության

կենսաթոշակային պլանը ներառում է կազմակերպություն, որը հիմնադրված է կամ գտնվում է Հայաստանի Հանրապետությունում և կարգավորվում է նրա օրենքներով կամ նախապես որոշված պայմանագրային կամ իրավաբանական միավոր, որը կոչված է ապահովելու կենսաթոշակներ կամ կենսաթոշակային նպաստներ կամ եկամուտ վաստակել այդպիսի նպաստներ ապահովելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների, և մուծումների, բաշխումների, հաշվետվության, հովանավորության և հարկման կարգավորմամբ:

4. **<u>Այլ պահանջներին համապատասխանող ՕՖՀ-ների կամ ազատված շահառու սեփականատերերի բացահայտում և կարգավիճակ:</u>** Միացյալ Նահանգները պետք է դիտարկի Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր ոչ հաշվետու ֆինանսական հաստատություն որպես ներկայացված պահանջներին համապատասխանող ՕՖՀ կամ ազատված շահառու սեփականատերեր, ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 բաժնի իմաստով:

5. **<u>Հատուկ կանոններ Ոչ-մասնակից ֆինանսական հաստատություն հանդիսացող փոխկապակցված կազմակերպությունների և մասնաճյուղերի համար:</u>** Եթե Հայաստանի Հանրապետության որևէ Ֆինանսական հաստատություն, որն այլ առումներով բավարարում է սույն Համաձայնագրի Հոդված 2-ում նկարագրված պահանջներին կամ նկարագրված է սույն Հոդվածի 3 կամ 4 պարբերություններում, ունի փոխկապակցված կազմակերպություն կամ մասնաճյուղ, որը գործում է այնպիսի օրենսդրական դաշտում, որը թույլ չի տալիս այդպիսի փոխկապակցված կազմակերպությանը կամ մասնաճյուղին բավարարել մասնակից ՕՖՀ-ին կամ ներկայացված պահանջներին բավարարող ՕՖՀ-ին ներկայացված պահանջները ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 բաժնի իմաստով, ապա Հայաստանի Հանրապետության այդպիսի ֆինանսական հաստատությունը կշարունակի դիտարկվել որպես մասնակից ՕՖՀ, ներկայացված պահանջներին բավարարող ՕՖՀ կամ ազատված շահառու սեփականատեր, ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 բաժնի իմաստով՝ պայմանով, որ.

ա) Հայաստանի Հանրապետության Ֆինանսական հաստատությունը դիտարկում է յուրաքանչյուր այդպիսի փոխկապակցված կազմակերպություն կամ մասնաճյուղ որպես առանձին Ոչ-մասնակից ֆինանսական հաստատություն և յուրաքանչյուր այդպիսի փոխկապակցված կազմակերպություն կամ մասնաճյուղ բացահայտում է իրեն որպես հարկային գործակալ՝ որպես Ոչ-մասնակից ֆինանսական հաստատություն,

բ) յուրաքանչյուր այդպիսի փոխկապակցված կազմակերպություն կամ մասնաճյուղ բացահայտում է իր ԱՄՆ հաշիվները և հայտնում է ՆԵԾ-ին այդ

հաշիվների մասին տեղեկությունները, ինչպես նախատեսված է ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 բաժնով՝ փոխկապակցված կազմակերպություններին կամ մասնաճյուղերին վերաբերող համապատասխան օրենքների թույլատրելի սահմաններում, և

գ) այդպիսի փոխկապակցված կազմակերպությունը կամ մասնաճյուղը հատուկ չի որոնում ԱՄՆ հաշիվներ, որոնք պատկանում են անձանց, որոնք ռեզիդենտ չեն այն երկրում, որտեղ գտնվում է տվյալ փոխկապակցված կազմակերպությունը կամ մասնաճյուղը, կամ հաշիվներ, որոնք սպասարկում են Ոչ-մասնակից ֆինանսական հաստատություններ, որոնք հիմնված չեն այն երկրներում, որտեղ գտնվում է այդ Փոխկապակցված կազմակերպությունը կամ մասնաճյուղը, և այդպիսի Փոխկապակցված կազմակերպությունը կամ մասնաճյուղը չի օգտագործվում Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատության կամ որևէ այլ Փոխկապակցված կազմակերպության կողմից՝ սույն Համաձայնագրով կամ ԱՄՆ Ներքին եկամուտների օրենսգրքի 1471 բաժնով նախատեսված պարտավորություններից խուսափելու նպատակով:

6. <u>**Սահմանումների համաձայնեցում ԱՄՆ Գանձապետարանի կանոնակարգերի հետ:**</u> Չնայած սույն Համաձայնագրի Հոդված 1-ին և սույն Համաձայնագրի հավելվածներում ներկայացված սահմանումներին՝ սույն Համաձայնագրի կիրարկման ժամանակ Հայաստանի Հանրապետությունը կարող է օգտագործել, և կարող է թույլ տալ Հայաստանի Հանրապետության Ֆինանսական հաստատություններին օգտագործել որևէ սահմանում ԱՄՆ Գանձապետարանի կանոնակարգից սույն Համաձայնագրի որևէ սահմանման փոխարեն՝ պայմանով, որ նման կիրառումը չի խոչընդոտի սույն Համաձայնագրի նպատակներին:

## Հոդված 4
## Հաստատում և կիրառում

1. <u>**Ոչ էական և վարչական սխալներ:**</u> Համաձայն ՕՖՀ Համաձայնագրի պայմանների և հաշվի առնելով սույն Հոդվածի պարբերություն 3-ով կնքված Իրավասու մարմնի համաձայնագրի բոլոր լրացուցիչ պայմանները՝ ԱՄՆ Իրավասու մարմինը կարող է ուղղակիորեն հարցում անել Հայաստանի Հանրապետության Հաշվետու ֆինանսական հաստատությանը, եթե հիմք ունենա ենթադրելու, որ վարչական սխալները և այլ ոչ էական սխալները կարող են հանգեցնել ոչ ճիշտ կամ ոչ լիարժեք տեղեկությունների փոխանցմանը, ինչը չի համապատասխանում ՕՖՀ Համաձայնագրի պահանջներին:

2. <u>**Նշանակալի անհամապատասխանություն:**</u> ԱՄՆ Իրավասու մարմինը պետք է տեղեկացնի Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմնին, երբ

ԱՄՆ Իրավասու մարմինը որոշի, որ առկա է նշանակալի անհամապատասխանություն ՕՖՀ Համաձայնագրի կամ սույն Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության Հաշվետու Ֆինանսական հաստատության հանդեպ պահանջների նկատմամբ: Եթե անհամապատասխանությունը չի վերացվում ԱՄՆ Իրավասու մարմնի կողմից նշանակալի անհամապատասխանության մասին ծանուցումն առաջին անգամ ներկայացնելուց հետո 12 ամիս ժամանակահատվածում, Միացյալ Նահանգները դիտարկում են Հաշվետու Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունը որպես Ոչ-մասնակից ֆինանսական հաստատություն՝ համաձայն սույն պարբերություն 2-ի:

3. **Իրավասու մարմնի խորհրդատվություն/համաձայնություն:** Հայաստանի Հանրապետության Իրավասու մարմինները և Միացյալ Նահանգները պետք է համաձայնության կամ պայմանավորվածության գան սույն Համաձայնագրի Հոդված 7-ով նախատեսված փոխադարձ համաձայնության ընթացակարգով, որը պետք է

ա) սահմանի սույն Համաձայնագրի Հոդված 2-ի պարբերության 2-ում նկարագրված տեղեկությունների փոխանակման ընթացակարգը, և

բ) նախատեսի կանոններ և ընթացակարգեր, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Հոդվածի իրականացման համար:

4. **Ապավինում Ծառայություն մատուցող երրորդ անձանց:** Համաձայն ՕՖՀ դրույթների և ԱՄՆ Գանձապետարանի համապատասխան կանոնակարգի՝ Հայաստանի Հանրապետության հաշվետու ֆինանսական հաստատությունը կարող է դիմել ծառայություն մատուցող երրորդ անձանց՝ ՕՖՀ պահանջները բավարարելու համար, սակայն այդ պահանջներին բավարարելու պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետության Հաշվետու ֆինանսական հաստատությանը:

## Հոդված 5
## Գործընկեր երկրներում ՕՀՀՀԱ-ի կիրարկման հետևողականություն

1 Հայաստանի Հանրապետությանը պետք է տրվի ավելի բարենպաստ պայմաններից օգտվելու հնարավորություն՝ համաձայն Հոդված 3-ի կամ սույն Համաձայնագրի Հավելված I-ի, Հայաստանի Հանրապետության Ֆինանսական հաստատությունների հանդեպ ՕՀՀՀԱ-ի կիրարկման առնչությամբ, ինչպիսին նախատեսված է այլ Գործընկեր երկրի հետ ստորագրված երկկողմ համաձայնագրով, որով մյուս Գործընկեր երկիրը պարտավորվում է ստանձնել նույն պարտավորությունները, ինչ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նկարագրված է սույն Համաձայնագրի Հոդված 2-ում, և միևնույն ժամկետներով և

պայմաններով, ինչպես նկարագրված է սույն հոդվածում և սույն Համաձայնագրի 4, 6, 9 և 10-Հոդվածներում:

2. Միացյալ Նահանգները պետք է տեղեկացնեն Հայաստանի Հանրապետությանը այդպիսի ավելի բարենպաստ պայմանների մասին, և այդ ավելի բարենպաստ պայմաններն ավտոմատ կերպով ուժի մեջ կմտնեն համաձայն սույն Համաձայնագրի՝ կարծես այդ պայմաններն ընդգրկված են եղել սույն Համաձայնագրում և ուժի մեջ են ավելի բարենպաստ պայմանները նախատեսող Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից, եթե միայն Հայաստանի Հանրապետությունը գրավոր չհրաժարվի այդ հայտից:

**Հոդված 6**
**Փոխադարձ համաձայնության ընթացակարգ**

1. Սույն Համաձայնագրի կիրարկման, կիրառման և մեկնաբանության հետ կապված՝ Կողմերի միջև դժվարություններ կամ կասկածներ ծագելու դեպքում, Իրավասու մարմինները պետք է ձգտեն լուծել հարցը փոխադարձ համաձայնությամբ:

2. Իրավասու մարմինները կարող են ընդունել և իրականացնել ընթացակարգեր՝ սույն Համաձայնագրի կիրարկումը դյուրացնելու համար:

3. Իրավասու մարմինները կարող են ուղղակիորեն հաղորդակցվել միմյանց հետ՝ սույն Հոդվածի համաձայն փոխադարձ համաձայնության գալու նպատակով:

**Հոդված 7**
**Գաղտնիություն**

1. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը, սույն Համաձայնագրի Հոդված 2-ի պարբերություն 2-ի և Հոդված 4-ի համաձայն, Միացյալ Նահանգներից ստացած ցանկացած տեղեկություն պետք է դիտարկի որպես գաղտնի և այդպիսի տեղեկությունները միայն պետք է բացահայտի անհրաժեշտության դեպքում՝ սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար: Այդպիսի տեղեկությունները կարող են բացահայտվել սույն Համաձայնագրով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման առնչությամբ դատավարության կապակցությամբ:

2. Սույն Համաձայնագրի Հոդված 2-ի և Հոդված 4-ի պարբերություն 2-ի համաձայն ԱՄՆ Իրավասու մարմնին տրամադրված տեղեկությունները պետք է

դիտարկվեն որպես գաղտնի և կարող են բացահայտվել միայն Միացյալ Նահանգների պաշտոնյաներին և մարմիններին (ներառյալ՝ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են ԱՄՆ դաշնային հարկերի գնահատմանը, հավաքագրմանը կամ վարչարարությանը կամ դրանց հարցով քրեական հետապնդմանը կամ որոշումների բողոքարկմանը կամ այդպիսի գործառույթների վերահսկմանը: Այդպիսի անձինք կամ մարմինները պետք է օգտագործեն այդպիսի տեղեկությունները միայն այդպիսի նպատակներով: Այդպիսի անձինք կարող են բացահայտել այդ տեղեկությունները բաց դատավարությունների կամ դատական որոշումների ժամանակ: Տեղեկությունները չեն կարող բացահայտվել որևէ այլ անձի, կազմակերպության, մարմնի կամ երկրի: Չնայած վերոհիշյալին՝ այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետությունը նախապես ներկայացնում է գրավոր համաձայնություն, այդ տեղեկությունները կարող են օգտագործվել այնպիսի նպատակների համար, որոնք թույլատրված են Կողմերի միջև գործող փոխադարձ իրավական աջակցության համաձայնագրով, որը թույլ է տալիս հարկային տեղեկությունների փոխանակում:

**Հոդված 8**
**Խորհրդատվություններ և փոփոխություններ**

1. Եթե սույն Համաձայնագրի կիրարկման կամ մեկնաբանման առնչությամբ ծագում է որևէ դժվարություն, Կողմերից յուրաքանչյուրը կարող է՝ անկախ սույն Համաձայնագրի Հոդված 7-ի պարբերություն 1-ում նկարագրված փոխադարձ համաձայնության ընթացակարգերի, պահանջել խորհրդատվություն՝ մշակելու համապատասխան միջոցներ սույն Համաձայնագրի կիրարկումն ապահովելու համար:

2. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ: Եթե չկա այլ պայմանավորվածություն, այդպիսի փոփոխությունն ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագրի Հոդված 11-ի պարբերություն 1-ում ներկայացված նույն ընթացակարգով:

**Հոդված 9**
**Հավելվածներ**

Հավելվածները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

**Հոդված 10**
**Համաձայնագրի ժամկետը**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Հայաստանի Հանրապետությունը գրավոր կտեղեկացնի Միացյալ Նահանգներին, որ Հայաստանի Հանրապետությունն ավարտել է սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտցնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերը:

2. Յուրաքանչյուր կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ դադարեցման մասին գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին: Այդպիսի դադարեցումն ուժի մեջ կմտնի դադարեցման ծանուցագրի ամսաթվից հետո 12-ամսյա ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Սույն Համաձայնագրի դադարեցման դեպքում երկու Կողմերն էլ պետք է պահպանեն սույն Համաձայնագրի Հոդված 8-ի դրույթներով նախատեսված պարտավորությունները՝ սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված բոլոր տեղեկությունների առումով:

Ի հաստատումն ինչի՝ ներքոստորագրյալները պատշաճորեն լիազորված են ստորագրել սույն Համաձայնագիրը:

Կատարված է [ք. Երևան ], երկու օրինակով, հայերեն և անգլերեն լեզուներով, երկու տեքստերն էլ հավասարազոր, [[illegible]] [[illegible]] 20[18] թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ**